ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

N 2357-Ա « 07 » մայիսի 2026թ.

ՀԱՂԹԱՆԱԿԻ ՓՈՂՈՑԻ Հ.67/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 01-007-0110-0043 ԵՎ 01-007-0110-0065 ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Սամվել Դարբինյանի լ/ա Մխիթար Դարբինյանի և Արման Եղիազարյանի դիմումները՝ Հաղթանակի փողոցի հ.67/1 և Հաղթանակ 39-րդ տեղամաս հ.64/1 հասցեներում գտնվող, սեփականության իրավունքով Սամվել Դարբինյանին պատկանող /ծածկագիր՝ 01-007-0110-0043 և 01-007-0110-0065/ հողամասերի (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.31102017-01-0127 և 30012023-01-0157 վկայականներ) նպատակային և գործառնական նշանակությունները փոխելու մասին:

Երևան քաղաքի ավագանու 2024թ. սեպտեմբերի 10-ի հ.204-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծի համաձայն՝ Հաղթանակի փողոցի հ.67/1 և Հաղթանակ 39-րդ տեղամաս հ.64/1 հասցեներում գտնվող /ծածկագիր՝ 01-007-0110-0043 և 01-007-0110-0065/ հողամասերը գտնվում են բնակավայրերի, բնակելի կառուցապատման գոտում:

Քննարկվող հողամասերն ընդգրկված չեն հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում և ՀՀ կառավարության 04.06.2020թ. հ.1023-Ն որոշմամբ հաստատված հավելվածների համաձայն՝ ըստ տարածագնահատման համաձայնեցված սխեմայի (01-007-0110-0043 և 01-007-0110-0065 կադաստրային ծածկագրով) հողամասերը գտնվում են 9-րդ գոտում:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ, 10-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14.3-րդ հոդվածի 12-րդ մասով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության հ.Ն/68337-25 և հ.Դ-82759-25 եզրակացությունները.

1.Երևան քաղաքի ավագանու 2024թ. սեպտեմբերի 10-ի հ.204-Ն որոշման համաձայն՝ Հաղթանակի փողոցի հ.67/1 և Հաղթանակ 39-րդ տեղամաս հ.64/1 հասցեներում գտնվող /ծածկագիր՝ 01-007-0110-0043 և 01-007-0110-0065/ Սամվել Դարբինյանին սեփականության իրավունքով պատկանող համապատասխանաբար՝ 0.005398հա և

0.02865հա մակերեսներով հողամասերի նպատակային նշանակությունները սահմանել բնակավայրերի, իսկ գործառնական նշանությունները՝ բնակելի կառուցապատման:

2. Հողամասերի նկատմամբ փոփոխված նպատակային և գործառնական նշանակությամբ իրավունքները ենթակա են պետական գրանցման՝ համաձայն կից ներկայացվող նախագծման թույլտվությունների (ճարտարապետահատակագծային առաջադրանքների):

3. Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման հիման վրա հողամասերի նպատակային նշանակության փոփոխման իրավունքի պետական գրանցումը ենթակա է իրականացման հողամասերի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքների տարբերության գումարները սեփականատիրոջ կողմից վճարված լինելու դեպքում:

4.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

5.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման, ճարտարապետության և քաղաքաշինության վարչությունների պետերի վրա:

6. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ